



2019-2020 ՄՐԳԱՇՐՋԱՆԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԶԱՅԼԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ (20.05.2020)

ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹԵՍԱՎՈՐՈՒՄԸ

ՀՖՖ Գործադիր կոմիտեն մայիսի 15-ին կայացած նիստի ընթացքում որոշում է կայացրել ս.թ մայիսի 23-ից վերսկսել 2019-2020 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությունը, իսկ մայիսի 30-ից վերսկսել նաև Առաջին խմբի առաջնությունը՝ արդեն իսկ գործող ձևաչափերով:

2019-2020 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների վերսկսումից 2 օր առաջ ՀՖՖ-ն ակումբներին կտրամադրի կորոնավիրուսի հայտնաբերման թեստեր: Ակումբները պարտավոր են թեստավորել ակումբի ամբողջ անձնակազմին (ֆուտբոլիստներ, մարզիչներ, պաշտոնյաներ և այլն) և թեստերի պատասխաններն անմիջապես ուղարկել ՀՖՖ ՄԿԱ բաժնի էլեկտրոնային հասցեին (competition@ffa.am):

ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԻՄԵՐԻ ՎՄԲՈՂՋ ԱՆՁԱՆԱԿԱԶՄԻ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՏԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Կրճատել տևից դուրս գալը և հյուրերի ընդունումը:

Խուսափել մարդկային կուտակումներից և հասարակական տրանսպորտից:

Պահպանել անձնական հիգիենայի կանոնները /առանձին սպասք, խոզանակ, սրբիչ, սպիտակեղեն:

ԹԻՄԵՐԻ ՄԱՐԶՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԲԱԶԱՅՈՒՄ

Նվազեցնել հավաքները փակ տարածքներում:

Ժողովների ժամանակ պահպանել 1-2 մետր սոցիալական հեռավորություն:

Հազալիս և փռշտալիս պահպանել 1-2 մետր սոցիալական հեռավորություն և ունենալ թաշկինակ:

ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԵԼՈՒՊԱՐԱԳԱՅՈՒՄ

Ցանկալի է, որպեսզի թիմը հյուրանոցում զբաղեցնի մեկ հարկ:

Վերելակի կոճակները սեղմել արմունկով:

Չայցելել լոբբի բար, չպատվիրել որևէ ծառայություն:

Ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ սենյակներում գտնվելու ժամանակահատվածում արգելվում է սենյակների մաքրումը հյուրանոցի աշխատակիցների կողմից:

ՄԻՆՉԵՎ ԽԱՂԻՄԵԿՆԱՐԿԸ

Մարզադաշտում կարող է ներկա գտնվել առավելագույնը 150 անձ (ոստիկանության և շտապ օգնության աշխատակիցների քանակը չի ներառվում վերոնշյալ թվաքանակի մեջ):

Յուրաքանչյուր խաղի համար դաշտի տեր ակումբը պետք է ներդնի հավատարմագրման համակարգ և վերահսկի, որպեսզի յուրաքանչյուր անձ մարզադաշտի տարածք մուտք գործի միայն անհատական հավատարմագրի առկայության դեպքում և դա կրի խաղի ամբողջ ժամանակահատվածում:

Մարզադաշտում գտնվող յուրաքանչյուր անձ պետք է կրի պաշտպանիչ դիմակ:

Հնարավորության դեպքում թիմերի մուտքը մարզադաշտի տարածք կազմակերպել տարբեր մուտքերով:

Յուրաքանչյուր խաղի համար դաշտի տեր ակումբը պարտավոր է կազմակերպել լրագրողների հավատարմագրում, որի արդյունքում կարող է հավատարմագրվել առավելագույնը 10 լրագրող՝ ըստ դաշտի տեր ակումբի հայեցողության: Ընդ որում, ներկա գտնվող բոլոր լրագրողները պարտադիր պետք է կրեն դիմակներ:

Մուտքի մոտ ջերմաչափման կազմակերպում /հեռավար ջերմաչափով/: Մարմնի 37 և ավել աստիճանի ջերմության արձանագրման դեպքում տվյալ անձի մուտքը մարզադաշտ արգելվում է:

Թիմերը պետք է ժամանեն մարզադաշտ տարբեր ժամերի:

Թիմային ավտոբուսները խաղերին մեկնելուց առաջ պետք է ախտահանվեն:

Նախախաղային խորհրդակցությունն անցկացվում է պաշտպանիչ դիմակներով՝ պահպանելով սույն ուղեցույցով նշված սոցիալական հեռավորությունը:

Գնդակ մատակարարող երեխաների քանակը պետք է լինի 6-8: Նրանք խաղի ամբողջ ժամանակահատվածում պետք է կրեն պաշտպանիչ դիմակներ և ձեռնոցներ:

Պատգարակ տեղափոխող անձնակազմը պետք է խաղի ամբողջ ժամանակահատվածում կրի պաշտպանիչ դիմակներ և ձեռնոցներ:

Եթե ակումբի անձնակազմը մարզադաշտ է ժամանում միևնույն ավտոբուսով, ապա ավտոբուսի մեջ ներկա ողջ անձնակազմը պետք է կրի դիմակ:

Ցանկալի է՝ դաշտի տեր ակումբի ֆուտբոլիստները և պաշտոնյաները ժամանեն մարզադաշտ անձնական մեքենաներով:

Դաշտի տեր ակումբը նախավարժանքից առաջ, խաղից անմիջապես առաջ, ընդմիջմանը և խաղից անմիջապես հետո պետք է ապահովի խաղի գնդակների, ինչպես նաև խաղի գնդակի համար նախատեսված տակդիրի ախտահանումը:

Ընդհանուր առմամբ դաշտի տեր ակումբը խաղից առաջ, ընթացքում և խաղից հետո պետք է ապահովի մարզադաշտի բոլոր այն տարածքների ախտահանումը, որտեղ առկա է ֆուտբոլիստների, պաշտոնյաների և ակումբների անձնակազմի տեղաշարժ և անցուղարձ՝ այդ թվում հիմնական տրիբունայի՝ պատվավոր հյուրերի համար նախատեսված հատվածը և լրագրողների նստատեղերը:

ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾԸ

Մարզադաշտի տարածքում գտնվող օգտագործվող հանդերձարանները և սենյակները խաղից առաջ անհրաժեշտ է ախտահանել: Դռները պետք է բաց լինեն, երբ խաղի պաշտոնյաները և ֆուտբոլիստները գտնվում են հանդերձարաններում և սենյակներում:

Հանդերձարաններում ֆուտբոլիստները պետք է պահպանեն նվազագույնը 1 մետր սոցիալական հեռավորություն:

Յուրաքանչյուր ֆուտբոլիստ պետք է ունենա անհատական տարաներ ջրի և հեղուկների համար:

Թիմերի բուժանձնակազմերի ներկայացուցիչները պարտադիր պետք է կրեն դիմակներ:

ՆԱԽԱՎԱՐԺԱՆԸ ԵՎ ԽԱՂԻ ՄԵԿՆԱՐԿԸ

Հիմնական կազմի և պահեստային ֆուտբոլիստները նախավարժանքը կատարում են միմյանցից առանձին:

Խաղադաշտ դուրս գալիս թիմերը չպետք է միաժամանակ գտնվեն

թունելում: Խաղից առաջ թիմերը չեն շարվում դեմքով դեպի հիմնական

տրիբունա:

Պահեստայինների նստարանին գտնվող ֆուտբոլիստները և պաշտոնյաները պետք է նստեն միմյանցից նվազագույնը 1 մետր հեռավորության վրա և կրեն պաշտպանիչ դիմակ ամբողջ խաղի ժամանակահատվածում: Պահեստայինների նստարանի՝ համապատասխան երկարություն չունենալու պարագայում, թույլատրվում է աթոռները տեղակայել նստարանի շարունակությամբ կամ մարզադաշտի ենթակառուցվածքից կախված՝ հիմնական տրիբունայի առաջին շարքերում:

Փոխարինված ֆուտբոլիստները հնարավորության դեպքում պահեստայինների նստարանին նստելու փոխարեն պետք է տեղափոխվեն մարզադաշտի տրիբունա՝ պահպանելով սույն ուղեցույցով նախանշված սոցիալական հեռավորությունը:

ԽԱՂԻ ԸՆԹԱԶՔՈՒՄ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Յուրաքանչյուր թիմի կազմակերպիչ կատարել առավելագույնը 5 (հինգ) փոխարինում:

Խաղի ընթացքի հաճախակի ընդհատումներից խուսափելու նպատակով յուրաքանչյուր թիմ խաղի ընթացքում կունենա միայն 3 հնարավորություն (դադար) փոխարինում կատարելու համար. փոխարինումները կարող են կատարվել նաև ընդմիջման ժամանակ, որը չի հաշվարկվի, որպես օգտագործված հնարավորություն:

Եթե երկու թիմերն էլ փոխարինում կատարեն նույն պահին, դա կհաշվարկվի որպես յուրաքանչյուր թիմի 3 հնարավորություններից մեկը:

Չօգտագործված փոխարինումները և փոխարինման հնարավորությունները կտեղափոխվեն ավելացված ժամանակ:

Եթե մրցումների կարգը թույլատրում է խաղի լրացուցիչ ժամանակում հավելյալ փոխարինում, ապա թիմերից յուրաքանչյուրը կունենա փոխարինման մեկ հավելյալ հնարավորություն. Փոխարինումներ կարող են կատարվել նաև մինչև լրացուցիչ ժամանակի մեկնարկը և լրացուցիչ ժամանակի ընդմիջման ժամանակ:

ՋՐԱՅԻՆ ԴԱԴԱՐԸ

Խաղի մեկնարկից 15 րոպե առաջ +30-ից մինչև +35 աստիճան օդի ջերմաստիճանի դեպքում խաղի ժամանակ կիրառվում է երկու ջրային դադար՝ մեկ րոպե տևողությամբ՝ խաղի 30-րդ և 75-րդ րոպեներին:

Խաղի մեկնարկից 15 րոպե առաջ +36 և բարձր ջերմաստիճանի դեպքում խաղի ժամանակ կիրառվում է մեկական րոպե տևողությամբ մինչև չորս ջրային դադար՝ խաղի 15-րդ, 30-րդ, 60-րդ և 75-րդ րոպեներին:

Ամեն դեպքում ջրային դադարի վերաբերյալ որոշումը կայացնում է խաղի Պատվիրակը՝ խաղի մեկնարկից 15 րոպե առաջ և խաղի ընդմիջմանը՝ օդի ջերմաստիճանի չափման արդյունքում և անմիջապես տեղեկացնում բոլոր շահագրգիռ կողմերին:

ԽԱՂԻ ԱՍԲՈՂՁ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾՈՒՄ ԱՐԳԵԼՎՈՒՄ ԵՆ

Ձեռքստեղծումները:

Թիմային լուսանկարը:

Գրկախառնությունները:

Դրոշների և հուշանվերների փոխանակումը:

ԽԱՂԻՑ ՅԵՏՈՒ

Յետխաղյա մամուլի ասուլիսները և բրիֆինգները չեղարկվում են և անցկացվում են միայն հեռավար տարբերակով: Յետխաղյա ասուլիսների և բրիֆինգների առցանց կազմակերպման պատասխանատվությունը դրվում է դաշտի տեր ակումբի ՉԼՄ-ների հարցերով պատասխանատուների վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՅՖՖ Պրոֆեսիոնալ մրցումների անցկացման 2019-20 մրցաշրջանի կանոնակարգի այն հոդվածները, որոնք նշված չեն սույն Ուղեցույցում, շարունակում են մնալ պարտադիր կատարման համար:

ՅՅ Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների, ինչպես նաև VBET Յայաստանի Գավաթի խաղարկության վերսկսումից հետո թիմերի կազմում կորոնավիրուսի դեպքերի հայտնաբերման դեպքում ՅՖՖ-ն կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները մրցաշրջանը պատշաճ կերպով ավարտին հասցնելու համար և ՅՅ Պարետատան հետ քննարկումների արդյունքում կկայացնի համապատասխան որոշումներ՝ ըստ իրավիճակի: